

ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՆՈՆՑ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՎՐԱՅ

Հայաստանի Հանրապետության երկամեայ կեանքին իրադարձությունները հայ ժողովուրդի նորագոյն պատմության ամենն պանծալի եւ, միեւնոյն ատեն, ամենն զժնդակ ու ցաւալի էջերը կը կազմեն: 1918էն 1920 երկարող ժամանակը նաեւ ցոյց կու տայ հայութեան նկարագրի ա՛յն գիծը, որ կը յատկանշուի ամենն ճգնաժամային վայրկեաններուն իսկ զիւտեր կատարելու կարողութեամբ, այլ մանաւանդ՝ քարէն հաց պատրաստելու վճռակամութեամբ:

Երկու տարուան կեանք ունեցող Հայաստանի Հանրապետութիւնը եթէ մէկ կողմէ հայ ժողովուրդի ազատամեծութիւնը խորհրդանշող ազդակն է, միւս կողմէ՝ անիկա Ցեղասպանութենէն ետք իր համրանքին կէսը կորսնցուցած անօթի ու սովահար ժողովուրդի մը վերածաղկելու ճիգին ապացոյցն է:

Ահա այս դիտանկիւնէն պէտք է մօտենալ Հայաստանի Հանրապետութեան նախարարութեանց երկու տարուան գործունէութեան: Խորքին մէջ, Հայաստանի Հանրապետութեան նախարարութիւններուն աշխատանքը հաւաքական կամքի արտայայտութիւն է, — Վերապրելու, ազատ ու անկախ հայրենիքի մը մէջ փթթելու ու ծաղկեցնելու ժողովուրդի մը տենչն ու ձգտումը:

ԱՌԱՋԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԵԼՈՒՔԱՅԼԵՐ

Մայիս 28ի անկախութեան յայտարարումէն ետք, Արամ Մանուկեան եւ Գրո փաստօրէն կը մնային Հայաստանի ամենն կարեւոր ղեկավարները, մինչեւ Թիֆլիսէն կառավարութեան Երեւան ժամանումը: Յուլիս 17ին, Քաջազնունիի վարչապետութեամբ կառավարութիւնը Թիֆլիսէն ճամբայ կ'ելլէ դէպի Երեւան, ուր կը հասնի Յուլիս 19ին եւ անմիջապէս կը ստանձնէ պետական իր աշխատանքները: Քաջազնունիի կառավարու-

թիւնը կազմուած էր հետեւեալ անձերէն. —

Յ. Քաջազնունի՝ վարչապետ,

Ա. Խատիսեան՝ արտաքին գործոց նախարար,

Ա. Մանուկեան՝ ներքին գործոց նախարար,

Խ. Կարճիկեան՝ ելեւմտական նախարար,

Գ. Պետրոսեան՝ արդարադատութեան նախարար:

Այս կազմը կոչուած էր ըստանձնելու ղեկը շուրջ 12 հազար քառ. քմ. Հայաստանի մը՝ «աղիատ ու կիսակործան մի երկիր՝ կծկուած ցամաք լեռների մէջ, աշխարհի խուլ անկիւնում, ծանրաբեռնուած գաղթականներով ու որբերով, շրջապատուած ատամ կերրտացնող թշնամիներով, անհաց, անդեղ, անօգնական: Սով ու հիւանդութիւն, աւար ու աւեր, լաց ու թշուառութիւն, կոտորածի սարսափ» (1):

Այս կառավարութեան գործը, բնական է, առաջին հերթին պիտի ըլլար բազմահազար սովահարներուն համար ապահովել հաց, անպատասպաններուն՝ բնակավայր, հիւանդներուն՝ դեղ: Հիմնականին մէջ, այս կազմը, որ գոյատեւեց մինչեւ Նոյեմբեր 4, գործի կը լծէ կառավարական մեքենան, կը կազմակերպէ նախարարութիւնները, բանակն ու վարչական կառոյցը: Միջոցներ ձեռք կ'առնէ՝ դատարաններու բարեկարգութեան ու դպրոցներու բացման համար: Մեծ գումարներ կը յատկացնէ գաղթականներու խնամատարութեան, գործի հայթայթման, որբերու հաւաքման ու պահպանումին եւ պարենաւորումի աշխատանքին համար: Տակաւին կար Հայաստանէն դուրս գտնուող կարօտեալներուն հարցը: Հայաստանի Խորհուրդը կէս միլիոն ռուբլի կը յատկացնէ Պաքուի հայ աղէտեալներուն, 5 միլիոն ռուբլի՝ Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդին, 3 հարիւր հազար՝ Պարսկաս-

տանի հայ փախստականներուն (2):

ՔՈԱԼԻՍԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՉՄԵՌԸ

Նոյեմբեր 4ին, Հայաստանի Խորհուրդը կ'ընդունի Քաջազնունիի հրաժարականը եւ նոյն Քաջազնունիին կը վստահի նոր կառավարութիւն կազմելու պարտականութիւնը: Քաջազնունի կը կազմէ երկրորդ կառավարութիւնը, հետեւեալ ձեւով. —

Յ. Քաջազնունի՝ վարչապետ,

Ս. Տիգրանեան՝ արտաքին գործոց նախարար,

Ա. Մանուկեան՝ ներքին գործոց նախարար,

Յ. Հախվերդեան՝ գինուորական նախարար,

Ա. Էնֆաջեան՝ ելեւմտական նախարար,

Ս. Յարութիւնեան՝ արդարադատութեան նախարար,

Մ. Աթաբէգեան՝ հանրային կրթութեան նախարար,

Լ. Ղուկեան՝ պարենաւորման նախարար,

Խ. Կարճիկեան՝ խնամատարութեան նախարար:

Այս կառավարութիւնը, փաստօրէն պիտի շարունակէր նախկինին սկսած գործը: Սովն ու հիւանդութիւններ կը շարունակէին աւեր գործել: Միայն 6 ամսուան ընթացքին, 180 հազար հոգի մեռած էր սովէն ու համաճարակներէն: Գոյութիւն ունէր մեծաթիւ գաղթականութիւն մը (շուրջ կէս միլիոն). հարկ էր հոգալ անոնց ապրուստը եւ ապահովել յարմար ապաստան: Տակաւին, վրացիներուն եւ ատրպէյճանցիներուն հետ օրը օրին կը ծագէին սահմանային հարցեր: Մէկ խօսքով, ծովածաւալ գործ կար կատարելիք՝ ամենն զժուար պայմաններուն մէջ, սակաւաթիւ եւ անփորձ ուժերով: Սովահարներուն կացութիւնը պիտի փոխուէր գարնան, երբ ամերիկեան ալիւր պիտի հասնէր Հայաստան՝ իրբեւ օժանդակութիւն: Հետագային, ցորենի եւ

այլ հացահատիկներու օժանդակութիւնը պիտի շարունակուէր՝ հասնելու համար 1 միլիոն 295 հազար 243 փութի:

Ողբերգական էր Հայաստանի առաջին ձմեռը, բայց դիմանալու կամքը դեռ չէր նահանջած: Կառավարութիւնը, առաջին հերթին, կը սկսի շինել հիւանդանոցներ, կը հաւաքէ որբերը եւ յատուկ խնամքի տակ կը պահէ զիրենք, ապա՝ կը սկսի նորոգել ճամբաներն ու երկաթուղիները, գործ հայթայթելով բազմաթիւ անհատներու, կ'ընդարձակէ հեռագրական ցանցը, Սեւնայ լիճին մէջ գործի կը լծէ հայկական առաջին գինուորական նաւը՝ «Աչոտ Երկաթ»ը եւ կը լծուի այլ աշխատանքներու (3):

Սակայն դիւրին չեղաւ Հայաստանի Հանրապետութեան առաջին ձմեռը: Հիւանդութիւնը խլեց կեանքը նաեւ Հանրապետութեան հիմնադիր Արամ Մանուկեանին, որուն մահը մեծ հարուած մը հասցուց Քաջազնունիի կառավարութեան ու բովանդակ Հայաստանին:

Այս բոլորին կողքին, կառավարութիւնը նաեւ ստիպուած էր նկատի առնել մեծամասնութեամբ թուրքերով ըրնակուած շրջաններուն հայութեան ցաւալի վիճակը: Այն շրջաններուն մէջ, ուր թուրք տարրը մեծամասնութիւն կը կազմէր, կը տիրէր անիշխանական իրավիճակ մը, իսկ հոն ապրող հայը կ'ենթարկուէր ամեն տեսակի վտանգի ու անարեւմտիկ: Իսկ այն վայրերէն, ուր կէ թուրք բանակը կը նահանջէր, իր ետին կը ձգէր կատարեալ ամայութիւն՝ աւերակի վերածելով քաղաքներն ու գիւղերը:

ԿԱՑՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԼԱԻՈՒՄՆ ՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի անտանելի առաջին ձմեռէն ետք, կացութիւնը սկսաւ հետզհետէ բարելաւուիլ արձանագրել՝ ներքին ապահովութեան, պարենա-

ւորման, հիւանդութեանց չէ-
զօքացման եւ տնտեսական
բարգաւաճման իմաստով:
Թէեւ սահմանային հարցերը
վրացիներուն եւ ատրպէյճան-
ցիներուն հետ տակաւին լուծ-
ւած չէին եւ Հայաստանը ձե-
ւով մը պատերազմի կացու-
թեան մէջ կը գտնուէր, սա-
կայն ներքին ապահովութեան
հաստատումով, արտաքին օ-
ժանդակութեանց (մա'նաւանդ
Մ. Նահանգներէն) ժամանու-
մով ու հայ ժողովուրդին գո-
յատեւելու կամքով՝ ժողո-
վուրդին համար ստեղծուած
էին աւելի տանելի պայման-
ներ, նաեւ՝ գործելու, աշխա-
տելու եւ բարելաւում արձա-
նագրելու նոր առիթներ:



Սիրական Տիգրանեան

1919 Մայիս 28ին, երբ կը
յայտարարուէր Միացեալ եւ
Անկախ Հայաստանի բանաձե-
ւը, ժողովուրդին վիճակը ար-
դէն կը սկսէր մտնել բնակա-
նոն հուսի մէջ: Ասկէ ետք,
Հայաստան պիտի ապրէր վե-
րելքի արագ եւ գոհացուցիչ
ընթացք մը, մա'նաւանդ Ռա-
տիսեանի վարչապետութեան
չրջանին (4):

Պէտք է ըսել, որ Հայաստա-
նի Հանրապետութեան առաջին
տարին կառավարութեան ինք-
նահաստատումի տարին էր:
Այլ Ռատիսեան իրաւացիօրէն
դիտել կուտայ (5), որ 1918 ա-
մառէն մինչեւ 1920 Դեկտեմ-
բեր, Հայաստանի իրերայա-
ջորդ կառավարութեանց ժա-
մանակաշրջանները, կարելի է
բաժնել երեք շրջանի. — Առա-
ջին շրջանը (չուրջ մէկ տարի
եւ երեք ամիս) վարչապետ
Բաջազնունիի շրջանն է, որ կը
յատկանշուի իրրեւ պետական-
կազմակերպչական շրջան:
Երկրորդ շրջանը՝ Ռատիսեա-
նի վարչապետութեան շրջանն
է, որ պէտք է նկատել քաղա-
քացիական-ստեղծագործա-
կան շրջան, իսկ ատկէ ետք,
յաջորդող երկու կառավարու-
թիւններու շրջանը եղաւ ներ-

քին խլրտումներու ու պատե-
րազմներու շրջան մը, որ հիմ-
նովին փոխեց պատմութեան
ընթացքը եւ հայ ժողովուրդին
համար ստեղծեց բոլորովին
նոր պայմաններ:

Անկախութենէն տարի մը
ետք, նախարարութիւնները
ի՞նչ կրցան կատարել մինչեւ
Հայաստանի խորհրդայնացու-
մը եւ ի՞նչ հակազդեցութիւն
ունեցաւ անոնց գործունէու-
թիւնը:

Եթէ Անկախ Հայաստանի ա-
ռաջին տարին վարչականօրէն
կազմակերպուելու եւ ինքնա-
հաստատումի տարի մըն էր,
ատկէ ետք, սակայն, Հայաս-
տանը ծաղկեցնելու եւ բարգա-
ւաճեցնելու աշխատանքին մէջ
կառավարութիւնը կրցաւ առ-
նել կարեւոր քայլեր: Կ'արժէ
հոս սերտել նախարարու-
թեանց գործունէութիւնը ա-
ռանձին-առանձին:

1) Ներքին գործոց նախա-
րարութիւն. — Այս նախարա-
րութեան գլուխը գտնուած են
Ա. Մանուկեան, Այ. Ռատիս-
եան, Ս. Մանասեան (իրրեւ
պաշտօնակատար), Ա. Գիւլ-
խանդանեան, Թուրէն Տէր Մի-
նասեան եւ Ս. Վրացեան՝ իր
վարչապետութեան շրջանին՝
իրրեւ պաշտօնատար:

Թուրէն իրաւամբ կը նշէ, որ
Արամ Մանուկեանի մահով
(Յունուար 26) ներքին նախա-
րարութիւնը երբեք չունեցաւ
այն վարկն ու ազդեցութիւնը,
գոր շահած էր շնորհիւ Մա-
նուկեանի. «Արամի մահուա-
նից յետոյ ներքին գործոց նա-
խարարութիւնը մեռաւ եւ
դարձաւ մի պարզ վարչու-
թիւն»: Արամի ժամանակ,
ներքին գործոց նախարարու-



Արտաշէս Էնփիատեան

թիւնը Հայաստանի Հանրապե-
տութեան բարոյական ու ֆի-
զիքական ուժն էր, վարչամե-
քենայի սիրտը, պետական եւ
կուսակցական բարոյական
հասկացողութեանց մարմնա-
ցումը եւ օրէնքներու գործա-

դրման ու պարտադրման լը-
ծակն ու միջոցը. Հայաստանը
կազմակերպելու բոլոր ձեռ-
տումներուն ու ճիգերուն կեդ-
րոնը (6):



Միխայէլ Աթաբեկեան

Արամի մահէն ետք, ներքին
գործոց նախարարութեանց
բաժանմունքները պիտի ըլլա-
յին առանձին նախարարու-
թիւններ եւ նախարարութիւնը
պիտի կորսնցնէր իր ազդեցու-
թիւնը. սակայն, արդար չէ
բոլորովին կրաւորական դիր-
քի մը մէջ զետեղել այս նախա-
րարութիւնը: Ռատիսեանի
նախարարութեան շրջանին,
«նախարարութեան գլխաւոր
մտահոգութեան առարկան էր
— Զէմստվային եւ քաղաքա-
կան հաստատութիւններու
կանոնադրութեան մշակումը,
որ յետոյ հաստատուեցաւ Հա-
յաստանի խորհրդարանէն:
Այդ օրէնքներու հիման վրայ
Հայաստանի մէջ մտցուեցան
զէմստվային հաստատութիւն-
ներ, որոնք սկսան գործել գա-
նազան գաւառներու մէջ»:

Նախարարութիւնը կը մշա-
կէ նաեւ քաղաքային կանոնա-
գրութիւն, կը կազմակերպէ եւ
կը վարէ ներքին ապահովու-
թեան ցանցը (7): Մինչեւ
1920ի Փետրուարը, երկաթու-
ղագիծերու վարչութիւնն ու
փոստ-հեռագրային գործա-
կալութիւնը կապուած էին
ներքին գործոց նախարարու-
թեան: Այս շրջանին նախարա-
րութիւնը կը նորոգէ 928 մղոն
հեռագրային գիծերը, կը հաս-
տատէ նոր գիծեր՝ մայրաքա-
ղաք Երեւանը կապելով այլ
քաղաքներու եւ շրջաններու
հետ, կը հաստատէ ներքաղա-
քային հեռաձայնային հաղոր-
դակցութեան առաջին ցանցը՝
Երեւանի եւ Էջմիածնի միջեւ,
կը նորոգէ եւ կը կառուցէ նոր
երկաթուղագիծեր ու կայա-
րաններ:

1920ին, այս նախարարու-
թեան յիշեալ գործունէութիւ-
նը արդէն այնքան ընդարձակ-

ւած էր, որ խորհրդարանը կը
համաձայնի Ռատիսեանի կազ-
մին մէջ աւելցնել հաղորդակ-
ցութեան նախարարութիւնը
(8):

2) Երկրագործութեան (գիւ-
ղատնտեսական) եւ պետական
նախարարութիւն. — Այս նա-
խարարութեան պաշտօնը վա-
րած են՝ Աւ. Մահակեան, Ս.
Վրացեան եւ Ա. Յովհաննիս-
եան: Առաջին անգամ, այս
նախարարութիւնը կազմուած
է Ռատիսեանի վարչապետու-
թեան շրջանին եւ ունեցած է
բեղուն գործունէութիւն:
Հիմնականօրէն, նախարարու-
թեան գործունէութիւնը ուղ-
ղուած է երկու ուղղութեամբ՝
մէկ կողմէ օգնութիւն փու-
թացնել գիւղացիութեան՝
քայքայուած տնտեսութիւնը
վերականգնելու ու գիւղա-
տնտեսութիւնը բարձրացնելու
համար եւ, միւս կողմէ՝ ու-
սումնասիրել Հայաստանի
բնական հարստութիւնները՝



Սամսոն Թարութիւնեան

ջուրի, հողի եւ երկրագործա-
կան իմաստներով (9):

Նախարարութիւնը վարչա-
կանօրէն բաժնուած էր երկրա-
գործական, անտառային, ջը-
րային, վիճակագրական, ա-
նասնաբուժական բաժիններու
եւ իւրաքանչիւր բաժնի մէջ
ծրագրուած աշխատանք կը
տարուէր: Նախարարութիւնը
Երեւանի մէջ ունէր երկրա-
գործական գործիքներու կեդ-
րոնական պահեստ մը՝ իր գա-
ւառի բաժանմունքներով,
ուրկէ գիւղացին մատչելի դի-
ներով կը ստանար գութան,
հնձող մեքենայ, մանգաղ, գե-
րանդի, ծծումբ, արջասպ եւ-
այլն (10): Մարտ 1ին (1920),
օրինակ, գիւղատնտեսական
գործիքներու համար կառա-
վարութիւնը յատկացուց 50
միլիոն ռուբլի: Մասնագէտ-
ներէ կազմուած յատուկ յանձ-
նախումբեր սկսան սերտել
Հայաստանի բնական հարու-

տուրիստները (աղ, ածուխ, եւայլն): Նոր օրէնսդրութեամբ մը՝ գետնի տակ գտնուող բոլոր հարստութիւնները նկատուեցան պետական սեփականութիւն: Գիւղատնտեսական հովանիին տակ կը գործէին նաեւ Հողային Յատուկ Կոմիտէները, որոնց վստահուած էր հողերը գիւղացիներուն բաժնելու եւ գիւղերու կամ գիւղացիներու միջեւ ծագած հողային հարցերը լուծելու պատասխանատուութիւնը (11):

Գիւղատնտեսական նախարարութիւնը Ալեքսանդրապոլի մէջ կը հիմնէ մկնդեղի գործարան՝ գիւղացիներուն մուկերու դէմ պայքարելու դեղ արտադրելու համար: Սեւանայ լիճին մօտ կը հիմնէ ձկնարուծական գիտական կայան, եւ պետական օրինակելի կաթնատնտեսութիւն՝ Կարսի շրջանին մէջ: Յատուկ ուշադրութեան առարկայ կը դարձնէ մեղուարուծութիւնը եւ, խրախուսելու համար մարզը՝ կը բաժնէ նպաստներ: Հաւաքական երկրագործութիւնը քաջալերելու նպատակով, միլիոնաւոր ռուբլի նպաստ կը բաժնէ գործող 350 համագործակցականներուն: Իսկ միայն սերմանման՝ մէկ շրջանի համար ստեղծուած «Սերմանման յատուկ կոմիտէն» իր բաժնած սերմի գումարը կը հասցնէ 375 հազար փութի (12):

Այս նախարարութիւնը նաեւ կը ստանձնէր իսլամներէ պարպուած շրջաններու հողերու ու գոյքերու բաժանումը՝



Արշամ Խոնդկարեան

գիւղացիներուն եւ տեղական ինքնավարութիւններուն:

3) Ելեւմտական եւ Պարսկաստանի միջին Արեւելքի կայաններու նախարարութեանց պաշտօնները ստանձնած են՝ Խ. Կարճիկեան (Ելեւմտական),

Լ. Ղուլեան (պարսկաստանական), Ք. Վերմիշեան (պարսկաստանական), Գ. Ջաղէթեան (Ելեւմտականի պաշտօնակատար), Ս. Արարատեան, Ա. Գիւլիսանդանեան եւ Հ. Տէրտէրեան: Պարսկաստանի նախարարութեան գործը, մանաւանդ առաջին տարուան ընթացքին, խիստ ողբերգական կացութեան մը դարձան գրտնելն էր, որ կը յաջողի ժողովուրդի կամօքին, ապահովութեան ու խաղաղութեան հաստատման, հողերու ընդարձակման եւ արտաքին օժանդակութեանց պատճառով: Խաղաղութեան դաշինքը վերջինն էր, որ Պարսկաստանի նախարարութիւն պիտի ունենար:

Անկախութեան հաստատումէն ետք, Ռուբէն կը հաստա-



Կառավարութեան անդամները Հոկտեմբեր 1919ին. նստած՝ Աւետիք Սահակեան, Ալեքսանդր Խաղապեան, Գոր. Քրիստափոր Արարատեան. ոտի՝ Նիկոլ Աղբալեան, Արքաիւս Գիւլիսանդանեան, Սարգիս Արարատեան

տէ, թէ Ելեւմտական նախարարութիւնը կը գտնուէր «փորձուած ձեռքերի մէջ»: Կարճիկեանը, թէ՛ իրրեւ իրաւարան եւ թէ՛ իրրեւ Անդրկովկասեան Ֆինանսների նախարար՝ բաւական հմտութիւն ձեռք ձգած էր այս ասպարէզին մէջ եւ, իր հետ ունենալով մասնագէտներու օժանդակութիւնը, այս նախարարութեան աշխատանքը կը զետեղէ «տեսական եւ գործնական լաւ հիմքերի վրայ»: Սակայն, ինչպէս արդարօրէն կը նշէ Ռուբէն, առաջին տարին, երբ համատարած սով էր, անգործութիւն եւ անապահովութիւն, «ոչնչով, ոչնչից՝ գործ պէտք էր ստեղծել» (13):

Անկախութեան յաջորդ տարին, երբ ապահովութիւնը կը դառնայ աւելի կայուն ու կ'ընդարձակուին Հայաստանի սահմանները, նախարարութեան գործը կը մտնէ զարգացման հունի մէջ:

Ելեւմտական նախարարութիւնը, որ խորհրդարանին կը ներկայացնէր կառավարութեան գործունէութեան նախահաշիւը, կը հաստատէ Հայաստանի հարկերու դրութիւնը եւ կը կազմակերպէ հարկային տեսչութիւն մը, կը ձեռնարկէ նոր դրամանիշներու տպագրութեան եւ կը հաստատէ առեւտրական օրէնքները (14):

Հոս պէտք է նշել, որ այս նախարարութեան ծրագիրներուն իրագործումը անմիջապէս առնչակից էր երկրի ապահովութեան հետ: Ռուբէն իրաւամբ կը նշէ, թէ «Ի՞նչպէս կարելի էր փինանսական-առեւտրական-արդիւնաբերական վիճակը բարար չափով զարգացնել, երբ Հայաստա-

տնտեսական զաղութներ, երկրագործական մեքենաներու պահեստներ ու արհեստանոցներ հիմնելու նպատակով, հայեւճափոն դրամատէրերու առջարկը՝ Ելեւմտա-երկաթուղագիծի մենաշնորհ ստանալու համար, եւայլն (16):



Արշակ Զամալեան

4) Խնամատարութեան նախարարութիւնը ստանձնած են՝ Խ. Կարճիկեան, Ս. Թորոսեան, Ա. Բարալեան, Ս. Արարատեան եւ Հ. Տէրտէրեան (իրրեւ պաշտօնակատար):

Ռուբէն, անդրադառնալով Հայաստանի Հանրապետութեան երկամեայ ժամանակաշրջանին այս նախարարութեան ունեցած զերին, կը գրէ. «Ով տեսել է Հայաստանի 1918-1919 թուականները, նա միայն կը հասկանայ այն կոշմարային ծանր կացութիւնը, որի մէջ կը գտնուէր ժողովուրդը եւ Հայաստանը եւ այդ յիշողը չի կարող չլցուել ինքնավստահութեամբ եւ հաւատքով դէպի մեր ժողովուրդի եւ մեր դեկավարների յամառ ու տոկուն աշխատանքը եւ նրա ստեղծագործական հնարքները» (17):

Մինչեւ 1919 ամառ, այս նախարարութեան հիմնական եւ առաջնահերթ գործը գաղթականներուն, որրերուն ու անպատասպարներուն հաց ու երգիք ապահովելն էր: Հայաստանի Հանրապետութեան առաջին ձմեռէն ետք տակաւին, կառավարութիւնը ամսական 35 հազար թոն ուտեստեղէն կը բաժնէր սովահար գաղթականներուն եւ, պէտք է նշել, որ մինչեւ 1919ի վերջերը 360 հազար գաղթականներ (երկու երրորդը՝ արեւմտահայ) գոյութիւն ունէին Հայաստանի մէջ (18):


1919ի աշունէն սկսեալ, խընամատարութեան նախարարութեան գործունէութիւնը

բարեգործական նպաստ հայթայթելու հանգրուանէն կ'անցնի աշխատաւորութեան օգնելու աշխատանքին: Յատուկ բաժանմունքներով, նախարարութիւնը կ'ունենայ բեղուն գործունէութիւն մը: Այս նախարարութեան շնորհիւ է, որ կը բազմանան եւ կը զարգանան զանազան տեսակի արհեստանոցները՝ նախարարութեան Աշխատանքի Բաժանմունքի հովանաւորութեան տակ (ղեկավարութեամբ Ալունեանի), որ ամբողջ երկիրը կ'օժտէ արհեստանոցներու եւ գործարաններու ցանցով: միայն Երեւանի մէջ ծնունդ կ'առնեն 30 պետական արհեստանոցներ (մանարան, կօշկակարութիւն, գորգագործութիւն, ոսկերչութիւն, ատաղձագործութիւն, կաւեղէնի արհեստանոցներ եւ այլն):

Այս նախարարութեան մէջ գործօն կարեւոր դեր կը խաղայ «Գլխաւոր ծարտարապետի Վարչութիւնը» (ակադեմիական Ալ. Թամանեանի ղեկավարութեան տակ), որ պիտի ստանձնէր աւերուած գիւղերու վերաշինութեան աշխատանքը: Խուճապ մը մասնագէտներ արդէն իսկ սկսած էին ուսումնասիրել Հայաստանի շինուածանիւթերը, հաւաքել նախանիւթեր, պատրաստել վերաշինական ծրագիրներ, յատակագիծներ եւ այլն:

Խնամատարութեան նախարարութեան կից կը գործէր նաեւ Գլխաւոր բժշկա-առողջապահական վարչութիւնը՝ Բժիշկ Յ. Տէր Միքայէլեանի գլխաւորութեամբ: 1919ի ըսկիցը Հայաստանի մէջ գոյութիւն ունէր միայն 9 հիւանդանոց՝ 300 մահճակալով: Նոյն տարուան աւարտին, հիւանդանոցներու թիւը 30 էր՝ 1600 մահճակալով. ստեղծուած էր նաեւ 5 բժշկակայան, 5 բուժակի կայան: Այս նախարարութիւնն է, որ կը կազմակերպէ «Բժիշկներու համագումարը»՝ մալարիայի դէմ պայքարելու համար: Իր գործունէութեան ընթացքին, նախարարութիւնը կը գործակցի Ամբրիկեան նպաստամատոյց կոմիտէի հետ:

5) Արդարադատութեան նախարարութիւն. — Արդարադատութեան նախարարութեան հաստատումն ու զարգացումը շրջանացան. բնականոն պայմաններով, մա'նաւանդ 1918-19 տարիներու ընթացքին: Հանրապետութեան առաջին տարին, հակառակ այս նախարարութեան գոյութեան, պետական դատարաններու գործունէութեան առընթեր



Ռուրէն Տէր Միմասեան

տակաւին գործի վրայ էին նաեւ ժողովրդական-յեղափոխական դատարանները: Քոալիտիոն կառավարութեան Արդարադատութեան նախարար Ս. Յարութիւնեան արդարադատութեան գործը կը դասուորէր ուսական օրէնքներու հիմամբ: Յարութիւնեան կը կազմակերպէ արդարադատութեան գործը, հիմնելով բարձրագոյն դատարան (քաղաքացիական, քրէական եւ վարչական բաժիններով), շրջանային դատարան եւ հաշտարար դատարաններ: Այս բոլորը կը կատարուէին, սակայն, ուսական հիմունքներով, նման ցարական օրերու դատարաններուն: Այս շրջանին, նոյնիսկ դատարաններու եւ պաշտօնէութեան պաշտօնական լեզուն ուստերէնն էր: Ռուսական այս ոճը, սակայն, չ'արժանանար ժողովուրդին ընդունելութեան, որովհետեւ բարբերու եւ սովորութիւններու յստակ տարբերութիւնը համակեցութեան եզր ստեղծելու կարելիութեան առիթ չէր տար:

Մինչեւ 1920 այս դրութիւնը հիմնական փոփոխութիւն չի կրեր. Արտաշէս Զիլինգիրեանի նախարարութեան ստանձնումը պէտք է անկրկնադարձ մը նկատել, որովհետեւ ան էր, որ իսկապէս կրցաւ «հայացնել» դատարանական այս դրութիւնը: Զիլինգիրեան փորձեց գլխաւորաբար որդեգրել ու կիրարկել հետեւեալ սկզբունքները, զորս կը յիշատակէ Ռուրէն.

«ա. — Որպէսզի դատաստանական հիմնարկութիւնները աւելի հարազատ դառնան ժողովրդեան, ուժ տրուեց քրոնիկալ ընտրակազմերի դրութեան (ժիւրի) եւ կեանքի մէջ լայն չափով գործադրութեան դրուեց:

«բ. — Ըստ հնարաւորութեան, բոլոր հայերէն չգիտցող պաշտօնեաները հեռացնելու եւ փոխարինուեցին հայերէն գիտցողներով. այդպիսով տակաւին առիթ ունեցան մասնակցելու դատաստանական գործերուն:

«գ. — Հայացուեց դատաստանական լեզուն ու գրագրութիւնը, եւ Հայը Հայաստանում հնարաւորութիւն ունեցաւ իր մայրենի լեզուով, առանց թարգմանի, իր խնդիրը կարգադրելու:

«դ. — Օրէնքները թարգմանուած էին հայերէնի, եւ իրաւաբանական բառարանի կազմութեան սկսուեց: Զանգ էր թափուում կազմել մեր ժողովրդական ոգուն համապատասխան օրէնքներ, հայկական շունչով» (19):

Այսպէսով, արդարադատութեան նախարարութեան գործը դարձաւ աւելի ժողովրդական ու գործնական, երդուեալ դատարաններու հիմնարկութիւնը գտաւ լայն ժողովրդականութիւն, երեք շրջանային դատարաններ՝ Երեւան, Ալեքսանդրապոլ եւ Կարս, ինչպէս նաեւ՝ դատարանի կեդրոնական պալատն ու Մերակոյտը (Երեւան) կրցան դառնալ արդարադատութեան ժողովրդային կեդրոններ:

Հոս կ'արժէ նշել, որ առաջին անգամ երդուեալներով դատ տեղի ունեցաւ Մարտ 15ին (1920): Թէեւ հարցը պարզ էր ու դատավճիռը՝ արագ, բայց եւ այնպէս թերթերը անոր մասին խօսեցան, կարծէք դատարանային կեանքին մէջ հիմնաքար մը ըլլար...: Խանդավառութեան պատճառը հարցին հուրիւնը չէր, ոչ ալ դատավճիռը, այլ՝ այն իրողութիւնը, որ առաջին անգամ ըլլալով, հայերէն լեզուով ու ամէնէն արդիական դարձուածքներով դատ ու դատաստան տեղի կ'ունենար Հայաստանի մէջ... (20):

Արդարադատութեան նախարարութեան պաշտօն ըստանձնեցին Գ. Պետրոսեան, Ա. Յարութիւնեան. Յ. Զմշկեան (պաշտօնակատար), Ա. Գիւլխանդանեան, Ա. Զիլինգիրեան եւ Ա. Խոնդկարեան:

6) Լուսաւորութեան (Հանրային կրթութեան) նախարարութիւն. — Այս նախարարութիւնը ստանձնած անձերը հետեւեալներն են. — Մ. Աթաբէգեան, Գ. Մելիք Զարագէօգեան, Նիկոլ Աղբալեան, Գ. Զաքարեան եւ Վ. Մինասխորեան:

Այս նախարարութիւնը եւս, ծանօթ պատճառներով, առա-



Արտաշէս Զիլինգիրեան (Ռուրէն Դարբինեան)

ջին տարուան ընթացքին չունեցաւ յատկանշական գործունէութիւն, մա'նաւանդ եթէ այս շրջանը բաղդատեմբ Աղբալեանի օրերուն հետ:

Նախարարութիւնը նոր կեանք ստացաւ, երբ Նիկոլ Աղբալեան անցաւ անոր գլուխը: Աղբալեան երբ նախարար եղաւ, տակաւին Հայաստանի դժոխային կացութիւնը չէր լուծուած, սակայն Աղբալեան կրցաւ այդ պայմաններուն տակ իսկ ունենալ խիստ երախտաւոր գործունէութիւն: Աղբալեանի անզուգական վաստակը տակաւին շատ աւելի մեծ պիտի ըլլար, եթէ գործը շարունակուէր անխռով:

Աղբալեան երբ ստանձնեց նախարարութիւնը, Հայաստանի մէջ կար 133 դպրոց, 383 ուսուցիչ 11.136 աշակերտով: Ան կրցաւ տարրական դպրոցներու թիւը հասցնել 456ի (չըհաշուելով Զանգեզուրի եւ Լոռիի շրջանները), ուսուցիչներու թիւը՝ 1047ի եւ աշակերտներուն թիւը՝ 41.188ի: Նոյն յառաջդիմութիւնը պիտի գտնենք նաեւ երկրորդական եւ միջնակարգ դպրոցներուն պարագային: 1918-19 տարեշրջանին կային 6 միջնակարգ դպրոց, 177 ուսուցիչ եւ 3137 աշակերտ, իսկ Աղբալեանի նախարարութիւնը ստանձնելէն ետք՝ 20 միջնակարգ դպրոց, 305 ուսուցիչ, 5162 աշակերտ, մէկ համալսարան՝ 8 դասախօսով եւ 200 ուսանող: Այս թիւերը կ'ապացուցեն, թէ ինչպիսի՜ հակայական աշխատանք տարած էր ան միայն քանի մը ամսուան ընթացքին: Սակայն այսքանով չբաւարարուեցաւ կրթական նախարարութեան աշխատանքը: 1919-20 տարիներուն, Երեւանի, Ալեքսանդրապոլի (այժմ՝ Լենինական) եւ այլ շրջաններու մէջ նախարարութիւնը հիմնած էր հանրակրթական

դասընթացներ, ժողովրդական համալսարաններ, մասնագիտական եւ երկրագործական դպրոցներ: Ծրագրած էր (եւ մասամբ իրագործած) բանալ մանկավարժական, մասնագիտական-արհեստից, համագործակցական եւ գինուո-

յաստանի Մարմնամարզական Ընդհանուր Միութիւնը, Հայաստանի տեխնիկական, իրաւաբանական, բժշկական, ուսուցչական, ուսանողական միութիւնները, հրատարակչական ընկերութիւնը, Երեւանի Հայուհեաց միութիւնը,

ներու շինութեամբ ու նորոգութեամբ:

Փոստ-հեռագրական բաժանմունքը եւս ընդարձակ աշխատանքի ձեռնարկած էր: Հեռագրական նոր գիծեր բացւեցան եւ հեռախօսային գիծ հաստատուեցաւ հետեւեալ շրջաններուն մէջ. — Կարս-Ալեքսանդրապոլ, Երեւան-Էջմիածին, Իգդիր-Երեւան, Աշտարակ-Երեւան-Ղամարլու, եւ այլն: Այս բաժանմունքը կը հաստատէ փոստ ու փոստային հաղորդակցութեան ցանցն ու օրէնքները, կը հրատարակէ նամականիշեր, եւ այլն: 1920ին կը բացուի Երեւանի ռատիոկայանը (23):

Կը ծրագրէ աւելի ընդարձակ գործունէութիւն, բայց քաղաքական իրադարձութիւնները, պատերազմը եւ Հայաստանի խորհրդայնացումը կը փոխեն Հայաստանի ճակատագիրը:

8) Զինուորական նախարարութիւնը գործել սկսած էր Հայաստանի Հանրապետութեան հիմնումէն առաջ: Թիֆլիսի մէջ, Ազգային Խորհուրդը հիմը դրած էր զինուորական մարմնի մը՝ Ստեփան Մամիկոնեանի, Ռուբէն Տէր Մինասեանի եւ զոր. Նազարբէգեանի հովանաւորութեամբ: Իսկ Երեւանի մէջ, Արամը զինուորական գործը կը բացէր զինամուր հիմերու վրայ, որուն շնորհիւ Սարգարապատի կը սկսէր զինուորական շինարարութիւնը ունեցան յաջող ելք եւ ծնունդ առաւ Հայաստանի Հանրապետութիւնը:

Երեւանի մէջ հաստատուելէն ետք, Քաջազունիի դահլիճի զինուորական նախարար Հախվերդեան (որ հմուտ զինուորական մըն էր), ռուս բանակին մէջ ծառայած հայ այլ սպաներու կողքին՝ նոր շրջան մը կը բանայ հայ զինուորականութեան պատմութեան մէջ: Ցարդ, զինուորական վիճակը ունէր կիսաժողովրդական-կիսագինուորական-յե-

թիւները, միւս կողմէ, սակայն, անիկա ունէր նաեւ թերութիւններ, մա՛նաւանդ իր ազգային ոգիի տեսակէտէն: Այս հարցը լուծելու համար, Դրո կը նշանակուի նախարարի օգնական, իսկ Հախվերդեան կը փոխարինուի զոր. Արատեանով (24):

Զինուորական նախարարութիւնը գլխաւորաբար կը զբաղի զինուորական մասերու բազմացումով, վարժեցման գործով, ինչպէս նաեւ՝ ռազմատնտեսական մասի կազմակերպումով: Զօրքերու ռազմական գործունէութիւնը, որ դադար չունէր, արգելք կը հանդիսանայ զօրամասերու վարժեցման, կազմակերպումին, մատակարարման եւ ընդհանուր գործունէութեան: Սակայն, շնորհիւ զօրքերու տոկունութեան ու հաւատարմութեան՝ հետզհետէ կ'ամրանար ու կ'ամրոջանար պետութիւնը՝ եւ կը ճգմունքի թուրք, թաթար, պուլշեիկ ապստամբութիւնները:

Պատերազմական վիճակն ու երկրի ներքին տագնապները պատճառ կը դառնային, որ կառավարութիւնը դիմէ զօրահաւաքի, որ սակայն խիստ դժուարութիւններու կը հանդիպէր՝ ժողովուրդի յոգնածութեան, սովի եւ աշխատող ձեռքերու պակասի պատճառով: Զգալի էր փոխադրութեան միջոցներու պակասը եւ հաղորդակցութեան միջոցներու թերութիւնը:

Այս պայմաններուն տակ, զինուորական նախարարութիւնը, նոյնինքն այս պայմանները յաղթահարելու համայնականէն մեկնած՝ կը ստիպուի հոգ տանիլ զօրքի կազմակերպումին, անոր զօրացման ու ընդլայնումին: Հակառակ բոլոր դժուարութիւններուն, կարելի կ'ըլլայ ընդլայնել հրետանիի կազմը, կը կազմակերպուի հեծելազօրքը, կը սկսին մասնաւոր



Հ. Յ. Դաշնակցութեան 3րդ Ընդհանուր ժողովի մասնակիցները, Սեպտեմբեր-Նոյեմբեր 1919

րական դպրոցներ: Աւելին՝ նախարարութիւնը սկսաւ կազմակերպել արուեստագէտներու ցուցահանդէսներ, հիմնեց պետական թանգարան, որուն համար առաջացուց յատուկ ֆոնդ՝ նկարներ, արձաններ ու արուեստի այլ գործեր հայթայթելու ու գնելու համար: Գրողները կ'արժանանային յատուկ ուշադրութեան (յիշենք Զարենցի պարագան) եւ նպաստ կը ստանային, նոյնիսկ եթէ անոնք Թիֆլիս կ'ապրէին: Հեղինակներու երկերուն հրատարակութեան համար կը բացուի 3 միլիոն 200 հազար ռուբլիի վարկ մը: 3 միլիոն 200 հազար ռուբլի կը յատկացուի գիտական եւ այլ գիրքերու թարգմանութեան համար, 4 միլիոն՝ հնութիւններու պաշտպանութեան, 35 միլիոն 920 հազար՝ դպրոցներու վերաշինութեան: Կը հիմնուին գրադարաններ (21), իսկ համալսարանը Երեւան փոխադրուելով՝ զարգացում կ'ապրի:

Երեւանի մէջ պիտի բացուէր պետական երաժշտանոց: Պետական թատրոնի կազմակերպման համար յատուկ աշխատանք կը տարուէր: 1920ին, ամառը, դերասաններ Զարիֆեան, Աբելեան, Մայալեան եւ ուրիշներ արգէն իսկ ներկայացումներ կ'ունենան Երեւանի մէջ:

Նախարարութեան քաջալերանքով կը կազմակերպուին մշակութային, գրական ու գեղարուեստական բազմաթիւ միութիւններ՝ Հայաստանի Գրական Ընկերութիւնը, Հա-

«Ռոստոմ» գրադարանը, եւ այլն:

Նախարարութիւնը իր կողքին կը ստեղծէ Հայաստանի Հնութեանց Պահպանութեան կոմիտէն, որուն նպատակն էր փրկել ու նորոգել հայ մշակոյթի ժառանգութիւնը: Այս կոմիտէի հովանաւորութեան տակ կը սկսին գործել ակադեմիական Թամանեանն ու ճարտարապետ Թ. Թորամանեանը, որոնք կը սկսին մանրամասնօրէն ուսումնասիրել Հայաստանի հնութիւնները՝ օգնական մասնագէտներու օժանդակութեամբ: (22)

Թիշեալ բոլոր ձեռնարկները կը մշակուէին հմտութեամբ, եւրոպական մօտեցումով ու ծրագիրներով: Ժողովուրդ, խորհրդարան թէ կուսակցութիւն՝ ամբողջական աջակցութեամբ երկիրը կ'ուղղէին «գէպի աղբիւրը լոյսին»:

7) Հաղորդակցութեան, փոստ-հեռագրական նախարարութիւն. — Այս նախարարութեան գլուխը անցած են Ա. Գիւլիսանդանեան, Ա. Զամալեան եւ Ա. Խոնդակարեան (իրրեւ պաշտօնակատար):

Հաղորդակցութեան նախարարութիւնը պիտի հիմնուէր 1920ի սկիզբները: Այս նախարարութիւնը ունէր երկու բաժանմունք՝ երկաթուղիներու եւ խճուղիներու: Առաջինի պարագային, գլխաւոր աշխատանքներն էին՝ կայարաններու նորոգութիւն կամ նոր կայարաններու հիմնում, շոգեկառքերու եւ վագոններու նորոգութիւն, մայրաքաղաքի եւ այլ քաղաքներու միջեւ կապերու հաստատում եւ այլ աշխատանքներ: Խճուղիներու բաժանմունքը կը զբաղէր ճամբա-



Հայ որբեր էջմիածնի մէջ

ղափոխական բնոյթ: Սակայն ասկէ ետք, կը սկսի կառուցել հայկական բանակը՝ ռուսական ոճի որդեգրումով: Ռուբէն կը յիշէ, որ մասնագիտական տուեալներու վրայ հիմնուած բանակը եթէ մէկ կողմէ ունէր իր առաւելու-

ղասընթացներ, կը զինուորի ու կը զգեստաւորուի զօրքը, Կարսի մէջ կը կառուցուի օդակայան, եւ այլն (25):

Զինուորական նախարարներ եղած են Յ. Հախվերդեան, Քր. Արարատեան, Ռու-

բէն Տէր Մինասեան եւ Դրօ (Դրաստամատ Կանայեան):

Հոս պիտի շանդրադառնանք արտաքին գործոց նախարարութեան գործունէութեան, նկատի ունենալով, որ այս նախարարութեան գործունէութիւնը նոյնինքն Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան պատմութիւնն է:

*
**

Նախարարութեանց գործունէութեան այս համառօտ ներկայացումէն իսկ կարելի է նշուի, որ գոյութիւն ունեցող խոչընդոտները՝ ներքին եւ արտաքին, չեն կրցած արգելակել երկրի վերակենդանացման համար թափուող ջանքերն ու տարուող ճիգերը: Ժիշդ է, որ նախարարութիւնները իրենք եւս գոհ չեն մնացած արդիւնքներէն, որովհետեւ ծովածաւալ աշխատանք կար կատարելիք, «անձեւ քոսս» էն երկիր պիտի կերտուէր... սակայն, ա՛յն՝ ինչ որ կատարած է, աներկբայօրէն ցոյց կու տայ, որ Հայաստանի Հանրապետութեան երկամեայ կեանքը այլ բան չէ, եթէ ոչ հայ ժողովուրդին վերապրելու ու ստեղծագործելու բնագործ, ճիգը եւ ձգտումը ներկայացնող ապացոյց:

Երկամեայ կեանքի մը ընթացքին թափուած ճիգերն ու անկարելին կարելի դարձնելու վճռական երթը, սակայն, դիւրին չընթացաւ. եթէ մէկ կողմէ պայքար կը տարուէր՝ սովն ու հիւանդութիւնները չէզոքացնելու, հայ շինարարն ու գիւղացին իրենց քրտինքով ակերակ դարձած երկիրը ծաղկեցնելու աշխատանքին ձեռնարկած էին, պետութիւն-կուսակցութիւն-ժողովուրդ կ'ուզէին ամրացնել հազարաւոր նահատակներու արիւնքով ձեռք բերուած հայրենիքը, միւս կողմէ՝ ներքին թէ արտաքին դաւերը, սովահար ու անպատասխար ժողովուրդին սիրտ ճմլող իրավիճակը ու ժամանակին պարտադրած անբնական կացութիւնը կը ստեղծէին դժգոհութիւններ՝ երկրի ղեկը ստանձնած կառավարութեան նկատմամբ: Դժգոհութիւններ՝ որոնք երբեմն կ'արտայայտուէին խորհրդարանին մէջ, կուսակցութեան կամ ժողովրդային խաւերէն:

Անշուշտ, դժգոհութիւնները, բոլորն ալ, կը բխէին բարի կամեցողութենէ, պարզապէս գործը ակելի լաւ հիմքով վրայ դնելու ու ակելի յաջող կերպով գլուխ հանելու համար:

Նախարարութեանց գործունէութեան ընկալումը եթէ մէկ կողմէ կը դիմադրուէր գոհունակութեամբ, միւս կողմէ՝



Հայաստանի համալսարանը, Երեւանի մէջ

թէ ինչո՞ւ կը դրսեւորուէին դժգոհութիւններ եւ բողոքներ, հարցը կարելի է ներկայացնել հետեւեալ ձևով:

ա.- Թուրքն, անդրադառնալով նախարարութեանց գործունէութեան նկատմամբ ստեղծուած դժգոհութեանց, կը գրէ, թէ շատ անգամ անոնց մղիչ պատճառը «դատողութիւնը չէր, այլ՝ կեանքի դառնութիւններից առաջ եկած զգացմունքը: Դա անհարկութեամբ արտայայտութիւն էր, մի որոնում՝ մթութեամբ մէջ մի ելք գտնելու» (26):

Սովն ու համաճարակը, աղքատութիւնն ու անպատասխարութիւնը երբեմն մարդիկ նոյնիսկ կը մղէին զազանութեան: Նախարար Կարճիկեան, օրինակ, գոհ կ'երթար Եգորի գնդակին, որովհետեւ այս վերջինը զայն Կարսի անկման պատասխանատու կը համարէր: Ուրիշներ կը դիմէին ինքնազուգոյս գործունէութեան՝ յարձակելով այս կամ այն տաճիկ գիւղին վրայ, եւայլն:

Մակայն այս դրութեան փրկութեան համար, նախարարութեանց կատարած աշխատանքին կողքին՝ նոյնքան կարեւոր եղած են Հայաստանի հայացման առաջնորդող ա՛յն

գործունէութիւնները, որոնք թուրք-թաթար գիւղերու վրայ կատարուած ասպատակումներով՝ երդիք ու ապաստան կ'ապահովէին բազմահազար գաղթականներու:

բ.- Անապահովութիւնը, անկարգութիւնը, անվստահութիւնը նաեւ մեծ դեր կը խաղային դժգոհութիւններու առաջացման մէջ: Երկիրը կը գտնուէր պատերազմական վիճակի մէջ, պետութիւնը տակաւին պէտք եղածին պէս չէր հաստատուած ու կը տիրէր ընդհանուր շփոթի մթնոլորտ: Այս պատճառներով, նախարարութեանց գործը կը հանդիպէր դժուարութիւններու, կամ կը դանդաղէր, ինչ որ պատճառ կ'ըլլար խորհրդարանին մէջ փոթորիկներու ստեղծումին եւ դժգոհութեանց:

Ֆինանսական նախարարութեան գործունէութիւնը, օրինակ, կապուած է ապահովութեան ու խաղաղութեան. երբ կը տիրէր խաղաղ մթնոլորտ՝ գործը կ'ընթանար շատ ակելի արագ ու արդիւնաւէտ: Հակառակ կ'ըլլար, երբ անապահովութիւնը ըլլար գերիշխողը: Այս նախարարութեան հանդէպ ուղղուած քննադատութիւնները սխալ չէին, բայց անոնք կ'ուղղուէին սխալ հաս-



28 Մայիս 1919

ցէի: Նախ պէտք է հաստատուէր կարգ ու կանոն, հանդարտութիւն տրուէր ու վրատահութեան ներշնչում՝ որպէսզի ելեւտական գործունէութիւնը մտնէր բնականոն հունի մէջ:

Անշուշտ, հոս մեծ դեր ունէր ներքին գործոց նախարարութիւնը, որ Արամի մահէն ետք երբե՛ք չէր կրցած ըլլալ ա՛յն՝ ինչ որ էր Արամի ողջութեան:

գ.- Բուլշեւիկեան թափանցումները, իրենց խափանարարական գործունէութեամբ ու աղիտալի հետեւանքներով, յաճախ պատճառ կը դառնային, որ կուսակցութեան ու խորհրդարանին շարքերուն մէջ տիրէր դժգոհութեան մթնոլորտ:

Նիկոլ Աղբալեան, օրինակ, մեկնելով այն սկզբունքէն, որ ուսումն ու ուսումնական աշխատանքը, երկիրը լուսաւորելու առաքելութիւնը գաղափարական խտրութիւն չի ճանչնար, ան հաւասար իրաւունքներով հայաստանցի քաղաքացիները կ'առնէր նախարարութեանէն ներս: Թուրքն կը գրէ. «Պետական, օրինական աշխարհաայեցի շնորհիւ, Հայաստանի դպրոցական գործի դեկավարութեան մէջ մեծ քաճիմ ստանձնած էին ո՛չ միայն չէզոքներ, ժողովրդականներ, Էսէններ, Էդեկներ, այլ ամենից վտանգաւորները՝ քոլշեւիկները: Սրանք, լիդերներէն սկսած, ինչպէս՝ Խանջեան, մինչեւ կարեւոր ու անկարեւոր գործիչները, դարձած էին ո՛չ միայն տեսուչներ, այլեւ՝ տեսուչներ եւ շրջանային տեսուչներ» (27):

Բուլշեւիկներու հանդէպ այս բարեացակամ մօտեցումը (որ ի վերջոյ պիտի յանգէր բուլշեւիկեան խռովութիւններու) շարամտութեամբ կ'օգտագործուէր նոյնինքն բուլշեւիկներու կողմէ: Վրաստանէն ու Ատրպէյճանէն հալածուած Լեւինի հետեւորդները խաղաղ ապաստան կը գտնէին Հայաստանի մէջ, ուր անոնք կը սկսէին տանիլ հակապետական գործունէութիւն: «Օձեր սընուցիմ մեր կուրճեքի վերայ», պիտի ըսէր Նիկոլ Աղբալեան: Բուլշեւիկներու հանդէպ բարեացակամ կեցուածքը աննկատ չէր անցներ. խորհրդարանը, որուն ջանքախիչ մեծամասնութիւնը դաշնակցական էր, դժգոհ բուլշեւիկներու հակապետական գործունէութենէն՝ կը պահանջէր ակելի խիստ ու զգուշաւոր մօտեցում: Հարկ կ'ըլլայ սպասել մինչեւ 1920 Մայիս, երբ Հանրապետութեան «կրճիկն սընած» բուլշեւիկներու սարքած դաւերը կը ճնշուին՝ Բիւրոկառավարութեան կողմէ:

դ. 1919ին, Հ.Յ.Դ. Յրգ Ընդհանուր ժողովը, նկատի

ունենալով Հայաստանի կա-
ցութիւնը, կը շեշտէր. «Ընդ-
հանուր ժողովը հարկ է համա-
րում շեշտել, որ ներկայումս
Հայաստանը ապրում է յեղա-
փոխական ժամանակաշրջան»:
Բնութագրումը շատ ճիշդ էր,
սակայն Հայաստանի կառա-
վարութիւնն ու խորհրդարա-
նը, որոնք հիմնուած էին եւ-

Դժգոհութիւն կ'առաջանար
նաեւ շարքերուն մէջ, երբ կա-
ռավարութիւնը (մա'նաւանդ՝
Քաջագնունիի վարչապետու-
թեան օրով) կը փորձէր ունե-
նալ բոլորովին անկախ գոր-
ծունէութիւն եւ ջանք կը թա-
փէր չէզոքացնելու Դաշնակ-
ցութեան ազդեցութիւնը՝ կա-
ռավարութեան գործունէու-



28 Մայիս 1919



28 Մայիս 1919. 1) Ծախիսաթումի, 2) Հ. Կոստյեան,
3) Համօ Օհանջանեան, 4) Հայր Արրահամ

րոպական շափուած-ձեւուած
յառաջադէմ սահմանադրու-
թեանց օրէնքներուն վրայ,
յիշեալ բնութագրումին յարիր
չէին, մա'նաւանդ՝ խիստ վը-
տանգաւոր կացութիւններու
ու պարագաներու ընթացքին:

Կառավարութիւն-խորհրդ-
արան յարաբերութեան ծի-
րին մէջ՝ խորհրդարանի բեմէն
արտասանուած երկար-բարակ
ճառերը, որոշումներու տա-
րուբերումը՝ կառավարու-
թեան ու խորհրդարանին մէջ,
այս պատճառով ալ՝ դանդաղ-
կոտութիւնն ու յետաձգումնե-
րը Դաշնակցութեան շարքե-
րուն մէջ կը ստեղծէին դժգո-
հութիւններ: Հայաստան
կ'ապրէր յեղափոխական մթ-
նոլորտ եւ հարկ էր յեղափո-
խականօրէն դիրքորոշուիլ,
բայց օրէնքները կը կաշկան-
դէին ա'յնքան, որ խորհրդա-
րանի բեմէն դաշնակցական
ներկայացուցիչները յաճախ
կը պոռային. «Վառնցէ՛ք ձեր
այդ փտած օրէնքները, ոչըն-
չացրէ՛ք օրէնսդրութեան գրքե-
րը եւ հաստատեցէ՛ք յեղափո-
խական օրէնքը» (28):

Ասկէ գատ, խորհրդարանը
հիմնուած էր յառաջադէմ եր-
կիրներու խորհրդարաններուն
ընդօրինակումով եւ կ'ընդօրի-
նակէր այդ երկիրներու սովո-
րոյթներն ու օրէնքները: Այս
սովորութիւնները եւ օրէնքնե-
րը չէին բխեր ժողովրդական
ոգիէ ու աւանդութիւններէ,
թերեւս դեռ ժամանակին յա-
րիր չէին եւ այդ շատ գեղեցիկ
օրէնքները շատ անգամ ան-
հասկնալի ու անմատչելի կը
մնային ժողովուրդին:

թեան վրայ: Անշուշտ, այս
մտտեցումը ունէր իր հիմնա-
ւորումները, բայց Դաշնակ-
ցութիւնը գիտէր, որ առանց
իր ուժին, իր կարողութեանց
եւ կարողականութեանց օգ-
տագործումին, կարելի պիտի
չըլլար կայունութիւն յառա-
ջացնել ու ամրանալ հողին
վրայ:

Եւ կառավարութեան գոր-
ծունէութիւնը յաճախ քննա-
դատութեանց թիրախ կը դառ-
նար ա'յն պատճառով, որ անի-
կա կ'ընդօրինակէր ռուսական
օրէնքներն ու գործելակերպը:
Դաշնակցութիւնը, իր Յրդ
Ընդհանուր ժողովին կը հաս-
տատէր. «Կառավարութիւնը
պետք է կաշկանդուի «օրինա-
կան» ռուսական կոնդեքսնե-
րով առաջադրուած պահանջ-
ներով»: Մինչդեռ, շատ յա-
ճախ հակառակն է, որ տեղի
կ'ունենար, որովհետեւ այդ
ժամանակաշրջանի դեկավար-
ները, գրեթէ բոլորն ալ (զին-
ւորական ու քաղաքացիա-
կան) ռուսական զարգացում
ունէին, կազմաւորուած էին
ռուս քաղաքներու եւ շրջա-
նակներու մէջ եւ, շատ բնա-
կան է, որ Հայաստանի մէջ
անոնք պիտի որդեգրէին ռու-
սական ոճ ու օրէնք:

Բայց այս իրողութիւնը գո-
հունակութեամբ չէր ընդուն-
ւեր ժողովուրդին եւ կու-
սակցական շրջանակներու
կողմէ, պարզ այն պատճա-
ռով, որ ռուսական գործելա-
կերպն ու օրէնքը ներդաշնակ
չէին հայ ժողովուրդի նկարա-
գրին, ըմբռնումներուն ու սո-
վորութիւններուն:

Օրինակ, արդարադատու-
թեան նախարարութեան ստեղ-
ծած կառոյցները չէին կրցած
ընկալուիլ ժողովուրդին կող-
մէ, մինչեւ որ անոնք «ազգայ-
նացման» ենթարկուեցան, հը-
րաժարեցան ռուսերէնէն եւ
դարձան՝ հայկական:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Սխալ է ըսել, որ Հայաստա-
նի Հանրապետութեան ժամա-
նակաշրջանը գերազանցապէս
պատերազմի, խռովութիւննե-
րու ու տազնապներու շրջան
մըն էր, հետեւաբար՝ նման
կացութեան մէջ ժողովուրդի
մը բնական զարգացումը, ըս-
տեղծագործութիւնն ու ապա-
գան հարցականի տակ պէտք է
առնուին:

Ծիշդէ, որ հայ ժողովուրդը
այդ օրերուն կ'ապրէր տազնա-
պահար իրավիճակ, գոյութիւն
ունէին սով ու հիւանդութիւն-
ներ, կէս միլիոն գաղթական,
տասնեակ հազարաւոր որբեր
եւ այլ հարցեր, բայց այն իրո-
ղութիւնը, որ Հայաստանն ու
հայր կրցան յաղթահարել այդ
դժուարութիւնները եւ ստեղ-
ծել տանելի պայմաններ, ար-
դէն իսկ մեծ գործ կը նկատ-
ւի: Տակաւին, 1920ի սկիզբ-
ները, երբ վերոյիշեալ աղի-

տալի խոչընդոտները այլեւս
ամբողջութեամբ վերացած
էին, Հայաստան սկսած էր
ապրիլ հապէս զարգացումի
շրջան մը: Այդ օրերուն է, որ
կը մշակուին ու գործի կը դըր-
ւին ծրագիրներ, թափ կը
ստանայ շինարարական աշ-
խատանքը, ուսումնական
կեանքը մեծ նուաճումներ
կ'արձանագրէ, Հայաստանի
գիւղատնտեսութիւնը կը սկսի
բերրի շրջան մը ապրիլ: Ա-
սոնք շատ աւելի արդիւնք պի-
տի տային, եթէ անշուշտ շա-
րունակուէր ազատ ու բնակա-
նոն կեանքը ու Հայաստան
չխեղդուէր «բուշեւիկեան
մուրճին ու թրքական սալին
միջեւ»: Փաստօրէն, Հանրա-
պետութեան օրերուն մշակ-
ւած շատ մը ծրագիրներ գոր-
ծադրուեցան Հայաստանի
խորհրդայնացումէն ետք:

Հոս նաեւ պէտք է անպայ-
ման շեշտել, որ ընկերվարա-
կան աշխարհահայեացքը ա-
ռաջին անգամ ըլլալով կենդա-
նի կեանք կը դառնար թէ՛
տնտեսականօրէն՝ հողաբաշ-
խումի, բնական հարստու-
թեան պետականացման ու աշ-
խատաւոր եւ գիւղացի դասե-
րու քաջալերման միջոցներով
եւ թէ՛ ազատութեանց յարգու-



28 Մայիս 1919

մով ու ժողովրդավարութեան կիրարկումով: Այս բոլորը կ'արտացոլան նախարարութեան գործունէութեան ընդ-ժէջէն:

Հայաստանի Հանրապետութեան երկամեայ կեանքի ընթացքին, նախարարութեանց կատարած գործն ու ժողովուրդին գործակցութիւնը, առաջին հերթին, ամէն բանէ աւելի, կ'արտայայտեն Հայ ժողովուրդի շինարար նկարագիրն ու ազատ ապրելու կամ-քը:

Արդար պէտք է ըլլալ եւ ըսել, որ Հայաստանի Հանրապետութեան երկամեայ կեանքը պատրաստեց այսօրուան Հայաստանի կառոյցներէն շատերուն հիմը, մա'նաւանդ՝ նախարարութեանց գործունէութեան ձգտած վաստակը մեծապէս նպաստեց Հայ ժողովուրդի գոյութեան ապահովման ու Հայաստանի վերականգնումին:

Բ. ՏՈՒՏԱԳԼԵԱՆ

- (1) Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 177:
- (2) Նոյն, էջ 194:

- (3) Ռիչըրտ Յովհաննիսեան, «The Republic of Armenia», Առաջին հատոր, էջ 147:

- (4) 1919էն մինչեւ 1920 Մալիս, Հայաստանի վարչապետը պէտք է նկատել Պատիսեանը: Ան, 1919ի ըսկիզբները, իբրեւ փոխ վարչապետ, արդէն կ'անցնի Քաջազունիի տեղ, երբ վերջինս Ամբրիկա կ'երթայ, Հայաստանի օժանդակութիւն ապահովելու համար:

- (5) Ա. Պատիսեան, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», էջ 133:

- (6) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Դրդ հատոր, էջ 312-313:

- (7) Ա. Պատիսեան, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», էջ 134:

- (8) Ռ. Յովհաննիսեան, «The Republic of Armenia», Բ. հատոր, էջ 290:

- (9) Ա. Պատիսեան, «Հայաստանի Հանրապետութեան

ծագումն ու զարգացումը», էջ 136:

- (10) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Դրդ հատոր, էջ 299:

- (11) Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 429-430:

- (12) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Դրդ հատոր, էջ 293-300:

- (13) Նոյն, էջ 294-295:

- (14) Ա. Պատիսեան, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», էջ 137:

- (15) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», էջ 297:

- (16) Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 424-425:

- (17) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Դրդ հատոր, էջ 303:

- (18) Ռ. Յովհաննիսեան, «The Republic of Armenia», Բ. հատոր, էջ 300:

- (19) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Դրդ հատոր, էջ 292-293:

- (20) Ռ. Յովհաննիսեան, «The Republic of Armenia», Բ. հատոր, էջ 295:

- (21) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Դրդ հատոր, էջ 283-284:

- (22) Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 432-433:

- (23) Ա. Պատիսեան, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», էջ 139-140:

- (24) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Դրդ հատոր, էջ 332-333:


- (25) Ա. Պատիսեան, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», էջ 135-136:

- (26) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Դրդ հատոր, էջ 135-136:

- (27) Նոյն, էջ 287:

- (28) Նոյն, էջ 276:





Կ Ա Լ Ը Ր Ի Ի Թ Ա Լ Ի

ՈՐ ՊՈՏԻ ԳՏԵՔ ԶԵՐ ԾԱՇԱԿԸ ԲԱՒԱՐԱՐՈՂ ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՅԹ

- ՓՈՐՍԸԼԵՆ ԵՒ ՏԱՄՏԱԿԸ ԼՈՒՍԱՍՓՈՓԵՐ ԱՌԱՍՏԱՂԻ ԵՒ ԱՆԿԻՆՆԻ
- ՆՄԻՉՔԻ ԿԱՌՔԵՐՈՐ ՃՈՒ ՀԱՐԱՔԱՏՈՅ
- ԱԼՊԱՍԹԻ ՍԻՐՆԵՐ ԵՒ ՇԱՂԿԱՄԱՆՆԵՐ

ՈՆՉՊԷՍ ՆԱԵՒ ԱՆԹԻՔ ԶԱՐԴԵՐ, ԵՒԱՅԼՆ:

Պուրճ Համուտի հրապարակ

